

«Հարկային տեղեկատուն» յուրաքանչյուր տարի հրապարակում է «Հարկեր, տուրքեր և վճարներ» օրենքների ամփոփ երկհատորյակը՝ հունվարի 1-ի դրությամբ գործող խմբագրությամբ: 2010թ. հրապարակվել են հարկային, մաքսային, պարտադիր սոցիալական ապահովության վճարների օրենսդրությանը վերաբերվող օրենքների ամփոփ տարբերակները՝ ներառելով 2009 թվականի ընթացքում ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված հարկային օրենքների բոլոր փոփոխություններն ու լրացումները: Ամփոփ ժողովածուն ներկայացվել է երկու մասով.

***Առաջին մասում ամփոփվել են՝***

- պետական բյուջե վճարվող հարկատեսակների մասին օրենքները,
- համայնքային բյուջե վճարվող հարկատեսակների մասին օրենքները,
- հարկային և մաքսային ծառայությունների մասին օրենքները,
- հարկային մարմնում հաշվառման կանգնելու մասին օրենքը,
- ֆիզիկական անձանց գույքի հայտարարագրման մասին օրենքը:

***Երկրորդ մասում ամփոփվել են՝***

- հարկային վարչարարությանը վերաբերվող օրենքները, մասնավորապես, ստուգումների կազմակերպման, ՀԴՄ-ների կիրառման, ՀԴՄ կիրառողների գործունեության կասեցման, դրամարկղային գործառնությունների մասին, արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին օրենքները,
- մաքսային օրենսգիրքը,
- տուրքերին և այլ պարտադիր վճարներին վերաբերվող օրենքները,
- պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենքը: